389
Հ-11

ՀՐԱՀԱՆԳ

ՄԻԼԻՑԻԱՅԻՆ՝ ՀՍԿԵԼՈՒ ԶԱՓԵՐԻ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՏՆՏԵՍՈՐՇԻ ՄԵՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՏՈՒԿ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ

1927

ԵՐԵՎԱՆ

389
2-11

0120-10

1008
38347

Բոլոր Գավգործկոմներին
Գավմիլվարչություններին

ՀՐԱՄԱՆ № 22

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ

5 Օգոստոսի 1927 թ.

Հայտարարելով «Հրահանգ Միլիցիային հսկելու չափերի ու կշիռների վերաբերյալ կանոնների կիրառմանը» առաջարկվում է միլիցիայի տեղական մարմիններին անշեղ գործադրել չափ ու կշռի վերաբերյալ սույն հրահանգը:

Վարչբաժնի վարիչ՝ Ա. Վարդանյան

ՀՐԱՀԱՆԳ

ՄԻԼԻՑԻԱՅԻՆ ՀՍԿԵԼՈՒ ՉԱՓԵՐԻ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ

1. Ն. Գ. Ժ. Կ. Տեղական մարմինների իրավասությանն է հանձնվում մոտիկից հսկելու, վորպեսզի քաշը, յերկայնությունն ու ծավալը վորոշելիս, ամեն տեսակի գործարքներ կատարելիս, առևտրի և արհեստագործության ժամանակ, նմանապես և աշխատավարձը վորոշելու համար աշխատանքը հաշվի առնելիս, նյութեր և

09 SEP 2013
55.212

մթերքներ բաժանելիս ու բաց թողնելիս, գործադրվեն օրինական չափեր ու կշեռքներ։

2. Օրինական չափերի ու կշեռքների վրա պիտի լինի ճյն ստուգման դրոշմը, որ դեռ ևս գործող է համարվում (ձև — 1)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ստուգման դրոշմի վավերականության ժամանակը սահմանում է չափերի ու կշեռների Գլխավոր Վարչությունը և Ն.Գ.Ժ.Կ.-ի կողմի հաղորդվում է Միլիցիայի տեղական մարմիններին։

3. Միլիցիայի հսկողությանը ենթակա յեն օրինական միջոցների կիրառման տեսակետից (կ. 2) պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունները, առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես օրինակ՝ խանութները, կրպակները, արկղները, շուկաները, պահեստները, դեղատները, ֆաբրիկաները, գործարանները և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Միլիցիայի պարտականությունների մեջ չեն մտնում այն չափերի ու կշեռքների հսկողությունը, վորոնք գործադրվում են անմիջականորեն Չափերի ու Կշիռների Գլխավոր Վարչության յենթակա ներքոգրյալ պետական հիմնարկություններում՝ յերկաթուղիներում, Ժողկապում, Ֆինժողկոմում, Արտաժողկոմատում, Ռազմական և Ծովային կոմիսարիատներում։

4. Միլիցիայի պաշտոնյաներին է հանձնարարվում հսկելու, վորպեսզի ձեռնարկություններում գործադրվեն 3-րդ կետում հիշված մետրական չափերն այն ժամանակամիջոցում, վորը սահմանվում է Միջվարչական մետրական Հանձնաժողովի կողմից և հրապարակվում է ի գիտություն հանրության սահմանված կարգով։

5. Միլիցիայի պաշտոնյաներին է հանձնարարվում հսկելու օրինական չափերի ու կշիռների ճիշտ գործադրությունը, վորի համար անհրաժեշտ է՝

ա) պահանջել, վոր վոսկերիչների խանութներում, դեղատներում, բանկերում, դեղապահեստներում ու պահեստներում վոսկին, լուսնվոսկին, արծաթը, թանկագին քարերը, դեղորայքի բաղկացուցիչ մասերը կշռելու համար գործադրվեն այսպես կոչված ամենաճշգրիտ չափեր ու կշեռքներ, վորոնց հատկանիշն է նրանց վրա յեղած դրոշմը (ձև 2-րդ).

բ) Թույլ չտալ գործադրելու յերկարության ծալվող չափեր (ձև 3-րդ) և ռուլետներ (ձև 4-րդ) մանուֆակտուրային ապրանքներ չափելու համար.

գ) Թույլ չտալ կշեռքների վրա ավելի մեծ ծանրություններ, քան այն թույլատրելի յե տվյալ կշեռքի համար (կշեռքի առավելագույն չափը ցույց է տրվում կշեռքի լծակի վրա).

դ) պահանջել, վորպեսզի կշեռքի վրա վորոշվի ապրանքի մաքուր քաշը (առանց փաթեթի կամ տարայի)։

6. Միլիցիայի պաշտոնական անձինք պիտի հսկեն չափերի ու կշեռքների կանոնավոր պահելուն, վորի համար անհրաժեշտ է՝

ա) պահանջել, վորպեսզի բոլոր չափերն ու կշեռքները պահվեն մաքուր և դրվեն հիմնար-

կության մեջ աչքի ընկնող և շահագրգռված անձանց համար տեսանելի տեղում. այդ չափերի վրայի ստուգման դրոշմները միշտ էլ պետք է պարզ տեսանելի լինեն.

բ) պահանջել, վորպեսզի սեղանի կշեռքները (ձև 5-րդ) դրվեն հորիզոնական սեղանի վրա, իսկ կախված նժարներ ունեցող կշեռքները (ձև 6-րդ) այնպես կախվեն, վոր **յերկու նժարները եվ գոնվեն սեղանի վրա** և նժարների հատակի հեռավորությունը սեղանից հավասար լինի վոչ պակաս քան 5 և վոչ ավել քան 10 սանտիմետրի.

գ) պահանջել, վորպեսզի տասնորդական (ձև 7-րդ), հարյուրերրդական (ձև 8-րդ) և այլ նման կշեռքների վրա միշտ էլ տեղում կախված լինի նրա կապարալարը (շղթան, ծայրին կշռաքար), վորը ցույց է տալիս կշեռքի կանոնավոր դրված լինելը.

դ) պահանջել, վոր ապրանքը կշռելուց հետո կշռաքարերը չմնան նժարների վրա և դրանք (կշռաքարերը) չգործածվեն մեխեր դամելու, թոկեր կտրատելու, շաքար, աղ կոտրելու և այլ պետքերի համար։

7. Միլիցիայի պաշտոնյաները թույլ չպետք է տան գործ ածելու, կիրառելու և պահելու առևտրա-արդյունաբերական ձեռնարկություններում **ապորինի** չափեր ու կշեռքներ, այսինքն այնպիսիները, վորոնք սահմանված դրոշմներ չունեն, նաև **վնասված** չափեր ու կշեռքներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1-ին.—Ապորինի (չդրոշմված) թվերին են պատկանում հետևյալ հաճախ գործածվող չափերը՝ զսպանակավոր բեզմենը և զսպանակավոր կշեռքները (ձև 9 և ձև 12); բեզմեններ մետաղե և փայտե կոթով, մի ծայրից կեռով կամ նժարով, իսկ մյուս ծայրից հակադիր ծանրությամբ և կոթի մեջտեղից փոխանցիկ հանգույցով (ձև 10); մետաղե արկղի ձև ունեցող կափարիչով կշռաքարերը (ձև 11); կրուժկաները, վորոնց վրա նշանակված են նրանց տարողության քաշը (նավթի, յուղի համար և այլն); կեղծ ստուգման դրոշմ ունեցող, կամ դրոշմը «X» նշանով ջնջված չափերն ու կշեռքները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2-րդ.—Վնասված չափերը հետևյալներն են՝ ցույնող սլաքներ չունեցող, կամ ծռված ու կոտրված սլաք ունեցող կշեռքներ, ծռված լծակներով, ֆնասված շղթաներով կամ նժարներով կշեռքները. ծռված, զոդած, պտուտակով ամրացրած կամ գուրգամած յերկարության չափերը։ Փայտե յերկարության չափերն առանց մետաղե ծայրերի ծռմռած պատերով կամ հատակով հեղուկների կամ հատիկների չափերը։

8. Առևտրական կամ արդյունաբերական ձեռնարկությունների կողմից սույն հրահանգի պահանջների խախտումը նկատելիս, միլիցիայի պաշտոնյաները կազմում են արձանագրություն, ապորինի և ֆնասված չափերն ու կշեռքները կնքում են, գրավում և արձանագրության հետ միասին ուղարկում Տեղական ստուգիչ Վարչությանը, կամ նրա բաժանմունքին՝ հետազննելու համար և ապա հետազննության ակտի հետ միասին ուղարկում համապատասխան դատական հիմնարկության՝ պատասխանատվության յենթարկելու, համաձայն քրեական որենագրքի 139 և 141 հոդվածների։

9. Արձանագրությունները պետք է կազվեն այդպիսիները կազմելու վերաբերյալ գոյություն ունեցող կանոնների համաձայն և չպետք է խոչընդոտ հանդիսանան առևտրին ու արհեստին կամ արդյունաբերական ձեռնարկությանց աշխատանքին։

10. Չափերի ու կշեռքների վրա հսկողություն կատարելիս Միլիցիայի պաշտոնյաներն իրավունք ունեն ազատ մուտք գործելու առևտրական բոլոր հիմնարկությունները։

11. Միլիցիայի պաշտոնյաները պարտավոր են աջակցել չափերի և կշեռքների Ստուգիչ Վարչությանց և Գլխավոր Վարչության աշխատակիցներին, վորոնք չափերն ու կշեռքներն ստուգելուց համար իրենց մոտ ունեն համապատասխան վավերագրեր։

12. Սույն հրահանգը կիրառելիս վորևե կասկած ծագելու դեպքում միլիցիայի պաշտոնյաները բացատրություն ստանալու համար դիմում են չափերն ու կշիռները Ստուգող Տեղական Ստուգիչ Վարչություններին։

ՀՍԽՀ Ներքգործկոմ՝

Մելիք-Հովսեփյան

ՀՍԽՀ Չափ ու Կշեռքների

Գլխավոր Վարիչ՝ Ա. Մելիքյան

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ № 50

Քաղվածք

Գլխավոր Դատարանին, Ժողդատարաններին յեվ Դատախազության, Դեռագույն Դատարանին ի գիտություն

Քրեական Որենսգրքի լրացումների ու փոփոխությունների հրապարակման հետևանքով,— Արդժողկոմատը առաջարկում է ի գիտություն, ղեկավարություն և կատարումն հետևյալը՝

1. Մինչև ՀՍԽՀ Քրեական Որենսգրքի մեջ կը մտցվեն հատուկ հոդվածներ, վոր սահմանելու յեն քրեական պատասխանատվություն չափերի ու կշիռների վերաբերյալ կանոնների խախտումների համար, այդ խախտումներին վերաբերյալ գործերը պետք է քննվեն Քրեական Որենսգրքի հետևյալ համանման հոդվածների հիման վրա՝

ա) Կշիռների և չափերի արտադրությունը առանց ստուգման կամ առանց դրոշմի նրանց վաճառումը—Քրեական Որենսգրքի 10 և 1 մ. 139 հոդ.

բ) Առևտրի մեջ առանց դրոշմի կամ անվավեր դրոշմով կշիռների և չափերի գործածելը —Քրեական Որենսգրքի 10 և 141 հոդ.

գ) Կեղծ դրոշմի պատրաստելը և նրանցով չափեր և կշիռներ դրոշմելը, նաև կեղծ դրոշմով

կշիռներ գործածելը—Քրեական Որենսգրքի 10 և 190-«ա» հոդ.

դ) Կեղծ դրոշմով կշիռներ և չափեր վաճառելը—Քրեական Որենսգրքի 10 և 190 «բ» հոդ.

2. Չափերի և կշիռների կանոնագրության խախտման և մանավանդ մետրիքական չափերի սիստեմի խախտման այն գործերը, որոնց չի կարելի քննել հրաժանների կարգով—քննել ըստ կարելույն շտապ կարգով, իսկ այդ գործերի մեծ քանակությամբ մանելու դեպքում և ցուցադրական պրոցեսների կարգով։

Արդժողկոմ՝ Լ. Վարդապետյան

1-ին բաժնի վարիչ՝ Պ. Պետրոսյան

№ 4161

24 նոյեմբ. 1926 թ.

Նեվ 1

«24» ցույց է տալիս դրոշմելու տարին. «1» թվանշանը ցույց է տալիս Սուզգիչ Վարչ. №-ը

Նեվ 2

«24» ցույց է տալիս դրոշմելու տարին. «T» Սուզգիչ Վարչ. պայման. նշանը։





Նեվ 3

Ծալվող յերկարության չափ



Նկ 4
Ռուլետ



Նկ 5
Սեղանի կշեռք



Նկ 6 *Կշեռք կախ նժարներով*



Նկ 7 *Տասնորդական կշեռք*



Նկ 8 *Հարյուրերորդական կշեռք*

Նկ. 9
Ապորինի զսպանակավոր բեզմեն



Նկ. 11
Ապորինի կշռաքարեր



Նկ. 10
Ապորինի բեզմեն



Նկ. 12
Ապորինի զսպան ակավոր կշեռք

«Ազգային գրադարան»
NL0226583

55.212

ԳՐԱՌԵՊ. № 305 Բ. ՏԻՐԱԺ 1000. ՊԱՏՎԵՐ № 4501.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ